2022-2023 ուսումնական տարի

# [illegible]ՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

Կազմակերպիչ՝ Լ. Գասպարյան

| Ամիս | Աշխատանքի բովանդակությունը | Ուս. շաբաթ |
|---|---|---|
| 09 | Նախապատրաստվել սեպտեմբերի 1_ի՝ գիտելիքի օրվան նվիրված միջոցառմանը | I |
| 09 | Դպրոցում կազմակերպել ամենօրյա աշակերտական հերթապահություն | II |
| 09 | Կազմակերպել աշակերտական խորհրդի աշխատանքները, հետևողականություն ցուցաբերել հանձնախմբերի աշխատանքների կազմակերպման ուղղությամբ: | III |
| 09 | Վերահսկել այն աշակերտներին , ովքեր պարբերաբար ուշանում և անհարգելի բացակայում են դասերից, նրանց հարցը քննել աշակերտական  խորհրդի նիստերին: | IV |
| 09 | Ուշադրության կենտրոնում  պահել ուսման մեջ ետ մնացող աշակերտներին: | V |
| 09 | Բարձր դասարաններում պարբերաբար կազմակերպել բանավեճեր, քննարկումներ, կլոր սեղաններ և այլն, որոնք էլ ավելի կնպաստեն  աշակերտների ինքնագիտակցության, ինքնակրթության և հոգևոր մտքի զարգացմանը: | |
| 09 | Անցկացնել ինտելեկտուալ մրցույթներ: | VI |

Scanned by TapScanner

| | | |
|---|---|---|
| 09_10 | Դասղեկների հետ միասին հետևողական աշխատանք կատարել դասարանական անկյունների, հերթապահության ցուցակների առկայությունը կազմակերպելու ուղղությամբ: | VII |
| 09_10 | Դասղեկների և բոլոր ուսուցիչների հետ միասին բոլոր դասարաններում կազմակերպել և անցկացնել <<Անկախության դաս>>: | VIII |
| 09_10 | Բարձր դասարաններում կազմակերպել գրական_երաժշտական երեկո`<<Հայաստանն է իմ հայրենիքը>> թեմայով: | IX |
| 09_10 | Աշակերտների հայեցի դաստիարակության ապահովության նպատակով դպրոցում աշակերտական խորհրդի անդամների հետ միասին ստեղծել ազգային տոների կազմակերպման օրացույց և աշխատանք տանել դրանք արդյունավետ նշելու և անցկացնելու ուղղությամբ: | X |
| 10 | Կազմակերպել ուսուցիչների մասնագիտական տոնին նվիրված միջոցառում: Աշակերտները երախտագիտության խոսքեր հղեն ուսուցիչներին: | XI |
| 10 | Դպրոցի բարձր դասարանների համար հաճախակի կազմակերպել հարց ու պատասխանի ցերեկույթներ` մեր կյանքում տեղի ունեցող սոցիալ_տնտեսական և քաղաքական հարցերի շուրջ: | XII |
| 10 | Կազմակերպել <<Ոսկե աշուն>> թեմայով | XIII |

Scanned by TapScanner

| | | |
|---|---|---|
| | միջոցառում: | |
| 10_11 | Տարբեր դասարաններում կազմակերպել և անցկացնել բարոյական թեմաներով զրույցներ, բանավեճեր | XIV |
| 10_11 | Ցածր դասարաններում կազմակերպել երեխաների նկարչական աշխատանքների ցուցահանդես: | XV |
| 11 | Հետևողական աշխատանք տանել աշակերտների գեղագիտական դաստիարակության գործի բարելավման ուղղությամբ: Աշակերտների հետ միասին բոլոր դասարաններում ստեղծել կանաչ անկյուններ և կազմակերպել հետևողական աշխատանքեր: | XVI |
| 11 | Այցելել տեղի պատմական հուշարձաններ ծանոթանալ նրանց պատմությանը, մաքրել հուշարձանների շրջակայքը և տեղադրել աղբամաններ: | XVII |
| 11 | Կազմակերպել դպրոցում սպորտլանդիա համագործակցելով ֆիզկուլտուրայի ուսուցչի հետ: Ընդգրկել դպրոցի I-XII դասարանների աշակերտներին: | XVIII |
| 11 | Աշակերտական խորհրդի հետ կազմակերպել <<Պարույր Սևակ>> գրական երեկո: | XIX |
| 11_12 | Տարրական դասարանների աշակերտների համար տարվա ընթացքում կազմակերպել բազմաբովանդակ ու հետաքրքիր միջոցառումներ՝ <<Հեքիաթին հյուր>>, <<Ծաղկի տոն>> և այլն: | XX |

Scanned by TapScanner

| | | |
|---|---|---|
| 11_12 | Աշակերտական խորհրդի հետ միասին կազմակերպել երկրաշարժի օրվան նվիրված <<հիշատակի օր>> միջոցառում: | XXI |
| 11_12 | Նորից հիշեցնել և սլայդներով ցույց տալ անվտանգության կանոնները: | XXII |
| 11_12 | Աշակերտական խորհրդի հետ քննարկելով և համապատասխան հանձնախմբի ղեկավարի մասնակցությամբ կազմել <<Ամանորյա հանդեսների>> ծրագիր: | XXIII |
| 12 | Ամփոփել առաջին կիսամյակում կատարված աշխատանքները | XXIV |
| 01 | Միջին և բարձր դասարաններում կազմակերպել ընթերցումներ <<Հերոսական կռիվներ>> թեմայով: | XXV |
| 01_02 | Հանդիպումներ կազմակերպել պատերազմի վետերանների և Արցախյան պատերազմի մասնակիցների հետ | XXVI |
| 01_02 | Կազմակերպել <<Հայոց բանակ>> թեմայով նկարչական մրցույթ: | XXVII |
| 02_03 | Փետրվարի 19_ին նշել Հովհաննես Թումանյանի 154_ամյակը: Կազմակերպել ընթերցանության մրցույթը և խրախուսել ակտիվ աշակերտներին: | XXVIII |
| 03_04 | Դպրոցում անցկացնել <<Լավագույն դասասենյակ>> մրցույթ և հաղթող դասարանի աշակերտներին ներկայացնել տնօրինության խրախուսանքին: | XXIX |
| 03_04 | Կազմակերպել և անցկացնել մարտի 8_ի նվիրված միջոցառում: Մեծարել մեր | XXX |

Scanned by TapScanner

| | | |
|---|---|---|
| | մայրերին, քույրերին, աղջիկներին և դպրոցում դասավանդող կին ուսուցիչներին: Կարևորել կնոջ դերը մեր կյանքում և հասարակությունում: | |
| 04_05 | Մասնակցել ֆրանկոֆոնիայի միջազգային օրվան մարտի 20_ը: Կազմակերպել միջոցառումներ <<Խաղաղություն>> և <<Ֆրանսիան Հայաստանի բարեկամ>> թեմաներով: Կարևորել այս կազմակերպության դերը և առաքելությունը: | XXXI |
| 04_05 | Միջին և բարձր դասարաններում կազմակերպել ընթերցումներ <<Հերոսական կռիվները Մեծ Եղեռնի օրերին>> թեմայով: Կազմակերպել միջոցառում նվիրված Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին: | XXXII |
| 05_06 | Աշակերտներին հանձնարարել նյութերի հավաքում՝ արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների մասին: | XXXIII |
| 05_06 | Ամփոփել 2022_2023 ուս. տարվա կատարած աշխատանքները: | XXXIV |

Scanned by TapScanner